ՀՐԱՆՏ ՍՄԲԱՏԻ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Հայրենի գրականությունը, քննադատությունն ու բանասիրական գիտությունը, մեր ողջ ժողովուրդը ծանրագույն կորուստ կրեցին. կյանքի 75-րդ տարում մեզնից հեռացավ բազմարդյուն գրականագետ, գիտության վաստակավոր գործիչ, Հայաստանի գրողների միության, նրա վարչության և ավագների խորհրդի անդամ, պետական և գրական մրցանակների դափնեկիր, Երևանի պետական համալսարանի երկարամյա դասախոս, հայ գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Սմբատի Թամրազյանը:

Ծննդավայր Աչաջուր գյուղի դպրոցն ավարտելուց հետո գալով Երևան՝ Հր.Թամրազյանը սովորել է պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում և ասպիրանտուրայում, ապա անցել կյանքի իմաստալից ու արգասավոր ճանապարհ:

Հայրենի բնությունը, գյուղական կենցաղն ու մարդկային հարաբերությունները, ընթերցած գրքերը նրան դեռ մանկությունից տվել էին առանձնահատուկ դաստիարակություն, ընտելացրել գեղեցիկը ընկալելուն, իրականությունը, գեղարվեստական պատկերի մեջ արտացոլված կյանքը խորությամբ ճանաչելուն և գնահատելուն: Պատահական չէ, որ հենց նա էր գյուղի հրապարակում վառվող խարույկից 1937թ. աննկատ փրկել ոչնչացվող ու արդեն վիրավոր երկու գիրք՝ Զարենցի «Գիրք Ճանապարհին» և Բակունցի «Սև ցելերի սերմնացանը», որոնք հետո բերել էր Երևան: Իր իսկ խոստովանությամբ՝ այդ գրքերն էլ վճռորոշ նշանակություն են ունեցել իր և սերնդակից ընկերների գրական ձիրքերի բացահայտման համար: Այդ արդելված գրքերն էին թաքուն քննարկվում գաղտնի հավաքներում, ուր միմյանց հետ գիշերն ի բուն գրական հարցերի շուրջ բանավիճում էին ամենամտերիմ դասընկերներով՝ Պարույր Սևակ, Վահագն Դավթյան, Էդուարդ Ջրբաշյան, Սուրեն Աղաբաբյան, Հակոբ Սալախյան: Երբեմն բանավեճերին մասնակցում էին նաև Հովհաննես Շիրազն ու Հրաչյա Հովհաննիսյանը:

Համալսարանական ու գրական միջավայրում հասակ նետած Հր.Թամրազյանը եղել է Հայաստանի ռադիոյի թղթակցական կետի վարիչ, եռանդով աշխատակցել «Ավանգարդ» թերթին: Այդ ընթացքում էլ նա գրել է գրականության տարբնույթ խնդիրների մասին իր առաջին հոդվածները, քննադատական նպատակասլաց ու հանդուգն ելույթները, որոնք արժանացան գրական հասարակայնության ջերմ հավանությանը:

Ակադ. Արսեն Տերտերյանի ասպիրանտ Հր.Թամրազյանը 1954թ. պաշտպանում է «Շիրվանզադեի դրամատուրգիան» աշխատությունը և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Այնուհետև երիտասարդ

գիտականը համարձակորեն մխրճվում է հայ դասական ու նորագույն գրականության բարդ խնդիրների մեջ, դառնում ժամանակի գրական շարժման առաջատար ուժերից մեկն ու հանուն գեղեցիկ գրականության մարտնչող ամենախիզախ քննադատը:

Սկսած 1950-ական թթ.՝ նա իր գրականագիտական մեծարժեք աշխատություններով ուղի և ընթացք է հաղորդել մոտիկ անցյալի գոհեհիկ սոցիոլոգիական կաղապարներից ու կաշկանդումներից աստիճանաբար ազատագրվող մեր գրական մտածողությանը, իր շուրջն ստեղծել բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ: Նա էր 50 – 60-ական թթ. պոեզիայի հարցերին նվիրված հայտնի բանավեճերը գլխավորողներից մեկը, ուր գրականության զարգացման ուղիների ու հեռանկարների, համաշխարհային գրական մտածողությանը համընթաց քայլելու միասին քննարկվում ու բարձրացվում էին ազգային գաղափարախոսության, հոգեբանության ու մտածողության հարցերը, անհատի պաշտամունքի տարիներին հանիրավի ոչնչացված, դատապարտված ու արգելված գրողների իրավունքների վերականգնման խնդիրները: Այդ բնագավառում Հր.Թամրազյանը իրոք կատարել է գրական իրավապաշտպանի անփոխարինելի դեր՝ այդ հասկացության ամենադրական ու լայն իմաստով:

Ժամանակի ընթացքում Հր.Թամրազյանն իրեն հատուկ տաղանդով մշակեց գրական կայուն սկզբունքներ, ազգային գեղարվեստական արժեքների գնահատման հստակ չափանիշներ, որոնցով սերունդները նոր հայացքով սկսեցին նայել մեր ժողովրդի ստեղծած գեղարվեստական մնայուն արժեքներին, ապրեցին հոգևոր ու մտավոր մեծ զարթոնք, հասան աննախադեպ ազգային ինքնաճանաչման ու ինքնագիտակցության: Սկսած 1957 թվականից՝ այդ պատմական դերը անվրեպ կատարում էր Հր.Թամրազյանի «Հայ գրականություն» դպրոցական դասագիրքը, որ ժամանակին արժանացել է Հայաստանի Պետական մրցանակի:

Արևմտահայ բանաստեղծության բախտի քննությունը, Մեծ եղեռնի տարիներին ոչնչացված բանաստեղծների, 1937թ. նահատակված գրողների՝ Սիամանթոյի ու Մեծարենցի, Վարուժանի ու Ռ.Սևակի, Չարենցի ու Բակունցի ստեղծագործության արժևորումը Հր.Թամրազյանը դժվարին ժամանակներում համարեց իր ստեղծագործական կյանքի գլխավոր նպատակադրումներից և իրականացրեց նախանձելի հետևողականությամբ...

1960-ական թթ. մեր գրական ու գիտական կյանքում իսկապես շրջադարձային էին Հր.Թամրազյանի «Խմբապետ Շավարշը պատմական դարաշրջանի լույսի տակ» ուսումնասիրությունն ու «Սիամանթո» մենագրությունը, նախորդ տասնամյակների գրական կյանքը լուսաբանող մյուս ուսումնասիրությունները, որոնք իրենց ազգային, գաղափարական ու գեղագիտական առողջ հարցադրումներով ուղի էին հարթում հոգևոր ու մտավոր աննախընթաց զարթոնք ապրող, առնականացող ու հզորացող նոր սերունդների համար:

Շուրջ կես դար աշխատելով Երևանի պետական համալսարանում՝ նա անմնացորդ դրսևորել է փայլուն դասախոսի, գիտական գործի մեծ կազմակերպչի իր ձիրքերը: Ավելի քան երեք տասնամյակ նա կատարել է ամբիոնի վարիչի պաշտոն. 1968 թվականից իր իսկ հիմնած՝ նորագույն հայ գրականության ամբիոնի վարիչն էր նա, իսկ 1980-ից մինչև 2001թ. փետրվարի սկիզբը՝ հայ գրականության ամբիոնի վարիչը: Նա անմրցելի դասախոս էր, 40-ից ավելի ասպիրանտների ու հայցորդների գիտական ղեկավարն ու խորհրդատուն: Այստեղ էլ նա սկիզբ դրեց «Չարենցյան ընթերցումներ» ամենամյա գիտական նստաշրջանին, ուր Հանրապետության գիտական լավագույն ուժերի և երիտասարդ հետազոտողների կարդացած զեկուցումներում նորովի բնութագրվեցին հանճարեղ բանաստեղծի

կյանքի դրվագները, գրական ուղու տարբեր շրջափուլերն ու առանձին ստեղծագործությունները: Այդ զեկուցումները տպագրվեցին «Զարենցյան ընթերցումներ» ժողովածուի վեց գրքերում:

Հր.Թամրազյանն ուներ գիտական լայն հետաքրքրություններ, անշրջանակ մտածողություն և օրինակելի, նախանձելի աշխատասիրություն: Ընդլայնած տարածության առողջությանը աշխատել է բառացիորեն մինչև վերջին օրը: Նրա բեղմնավոր գրչի հունձքը ավելի քան պերճախոս է. շուրջ 45 մենագրություններ, դպրոցական, բուհական դասագրքեր ու ուսումնական ձեռնարկներ, մոտ 300 գիտական հոդվածներ և ուսումնասիրություններ, տասնյակ գրքերի առաջաբաններ: Եվ այս ամենը՝ մանկավարժական աշխատանքին զուգահեռ:

Մեծ է նրա դերը հայագետ գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործում. այսօր Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի գիտության ու մանկավարժության, գրահրատարակչության, մամուլի, ռադիոյի ու հեռուստատեսության բնագավառներում աշխատող մասնագետների մի ստվար մասը նրա սաներն են:

Ակադեմիկոս Հր.Թամրազյանն ստեղծել է գրականագիտական իր դպրոցը, ուրույն, ոչ մեկի հետ չշփոթվող ոճը: Նա դասական գիտնականի լավագույն օրինակ էր. այդ բացառիկ ու հզոր անհատականության մեջ ներդաշնակորեն համադրված էին բանասերը, գրականության պատմաբանը, քննադատն ու տեսաբանը: Նա առանձնանում էր մի էական յուրահատկությամբ. գրական նյութի խորիմացությունը նուրբ դիտողականությամբ, հմտորեն զուգակցում էր միայն իրեն բնորոշ գեղագիտական բովանդակալից վերլուծություններին. դրա շնորհիվ էլ նրա գրավոր խոսքը ձեռք էր բերում գիտական ծանր կշիռ ու համոզչություն, իսկ դասախոսություններն ու գիտական զեկուցումները տպավորիչ էին այնքան, որ ունկնդիրների վրա ունենում էին ազդեցության ու ներգործության վիթխարի ուժ:

Հայ գրական մտքի զարգացման ընթացքը բնորոշող նրա ուսումնասիրությունները և մանավանդ, եռահատոր «Հայ քննադատությունն» ու նրա ռուսերեն հրատարակությունը, «Սովետահայ գրականության պատմությունը», «Սիամանթո», «Շիրվանզադե», «Վահան Տերյան», «Եղիշե Զարենց», «Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը» մենագրությունները, «Պոեզիան պատմության քառուղիներում», «Բանաստեղծը և ճակատագիրը», ինչպես նաև «Դիմանկարներ և հոդվածներ», «Հայ քնարերգուներ» ուսումնասիրությունների ժողովածուների երկհատորյակները, դասագիրք լինելուց բացի, դարձան նաև մեր ժողովրդի ստեղծած գեղարվեստական ու գիտական արժեքները միջազգային չափանիշներով գնահատելու լավագույն միջոց:

Մովսես Խորենացուն ու Գրիգոր Նարեկացուն, վաղ և ուշ շրջանի միջնադարյան մյուս գրողներին, Խաչ. Աբովյանին ու Մ. Նալբանդյանին, Բաֆֆուն ու Հակոբ Պարոնյանին, Ավ.Իսահակյանին ու Մեծարենցին, Ռուբեն Սևակին ու Դանիել Վարուժանին, Ակսել Բակունցին ու Գուրգեն Մահարուն, Հովհաննես Շիրազին ու Պարույր Սևակին, Համո Սահյանին ու Վահագն Դավթյանին, հայրենի ու սփյուռքահայ մյուս նորագույն գրողներին նվիրված նրա մենագրություններն ու ուսումնասիրությունները ծանրակշիռ ներդրում են հայ գրական մտքի պատմության մեջ և լուսավոր ուղենիշ են սերունդների ճանապարհին:

Բնավ պատահական չէ, որ այսօր հայ դասականներն ու ժամանակակիցները իրենց գործով ու վաստակով, թողած գեղարվեստական ժառանգությամբ գիտական աշխարհին ու ընթերցող լայն հանրությանը գերազանցապես ընկալելի և ընդունելի են հենց Հրանտ Թամրազյանի ըմբռնումներով, նրա դիպուկ գնահատումներով ու բանաձևումներով:

Տարիներ շարունակ ակադ. Հրանտ Թամրազյանը լռելյայն ու բարձրաձայն մտորում էր միջնադարի Հայ գրականության խոշորագույն երևույթներից մեկի՝ Նահապետ Քուչակի մասին և այդ առիթով հաճախ էր բանավեճի բռնվում գրական բարեկամների ու գործընկերների հետ: Այդ բանավեճերն էլ նրան մղեցին առավելագույնս խորանալու Քուչակի անձնավորության ու ստեղծագործության հետ կապված առեղծվածների մեջ, ուսումնասիրելու ձեռագրական նյութերն ու հրապարակումները, հայ բանասիրության մեջ արտահայտված հակասական կարծիքներն ու տեսակետները, օտար գրողների ու գրականագետների բնութագրումները:

Ինդրի կարևորության խոր ըմբռնումով՝ ակադ. Հր.Թամրազյանը ձեռնարկեց վերջին՝ «Նահապետ Քուչակ» գրքի ստեղծումը. նա ուժերի գերագույն լարումով, իր սաների ու երիտասարդ գործընկերների հետ միասին, ի մի բերեց, մի գրքում հավաքեց Քուչակին վերաբերող բոլոր նյութերը և գրեց քուչակյան առեղծվածը հանգամանորեն քննող ու իր տեսակետը հստակորեն ներկայացնող, քուչակյան հայրենների գեղարվեստական արժեքը խոր գիտականությամբ արժևորող ընդարձակ առաջաբան: Համակարգելով ողջ նյութը՝ նա նորովի բնորոշեց հայրենները՝ իբրև սեղմ ձևի մեջ կենսական մեծ ու հարուստ բովանդակություն խտացնող յուրօրինակ ներդաշնակության բանաստեղծական տեսակ և իբրև հայ գեղարվեստական մտածողության բարձրագույն արտահայտություններից մեկը, դրանք համարեց մեծ անհատի ստեղծած և ցայսօր ըստ էության չգնահատված ազգային մեծ հարստություն:

Այս ամենին զուգահեռ՝ Հր.Թամրազյանը ավարտել է իր հուշերի գիրքը, որի էջերում ազնիվ օրագրողի պես կերտել է իր կյանքի ճանապարհին հանդիպած նշանավոր մարդկանց դիմանկարները:

Վերջի ու վերջինի մասին ոչ ոք չէր մտածում: Ասելիք շատ ուներ ու շատ բան տարավ իր հետ. դրանք կարող էին դառնալ հերթական հոդված, ուսումնասիրություն, մենագրություն... Սակայն թողածն է էականը՝ վիթխարի գրականագիտական ժառանգություն, որն ըստ արժանվույն դեռ պետք է ուսումնասիրվի ու գնահատվի:

Մեծ ուսուցչի ու գիտնականի, բարձրագույն մտավորականի՝ Հրանտ Թամրազյանի պայծառ հիշատակը անմար կմնա սերունդների սրտերում:

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր